Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ ‹‹Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց›› ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համագործակցային մեթոդի կիրառմամբ աշակերտների ներգրավվածության ապահովումը ուսումնական դասընթացին

Անցկացման վայրը՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Բեյբության Հասմիկ

Ուսուցիչ՝ Մանուկյան Սոնա

Դպրոց՝ ‹‹Վարդենիսի №3 հիմն. դպրոց››

Վարդենիս 2022թ.

Բովանդակություն

**Ներածություն……...…….……...…
……..3**

**1.Գրական
ակնարկ……..……....7**

**2. Փորձարարական
հետազոտություն…….....……...…….....……..16**

**2.1. Խմբի
նկարագիրը……..…….....……16**

**2.2. Փորձարարական
դասեր…….…...……17**

**2.2.1.Փորձարարական
դաս-1……..…....……..17**

**2.3.2. Փորձարարական
դաս-2……...…….....……18**

**3.Վերլուծություն…….....……
……20**

**Գրականության
ցանկ……....…….....…22**

**Հավելված……...…...……...……
…23**

1.Դասապլան-1……....…...……23

2.Դասապլան-2……..……....……26

Ներածություն

Ժամանակակից հասարակություններին բնորոշ է միջպետական հարաբերությունների ընդլայնումը, առևտրատնտեսական կապերի խորացումը, գիտության և տեխնիկայի առաջընթացը և գիտատեխնիկական տեղեկատվության պարբերական փոխանակումը: Այս տեսանկյունից ավելի մեծ կարևորություն է ստանում օտար լեզուների դերը՝ որպես աշխարհում գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալ-տնտեսական զարգացումների և միջմշակութային հարաբերությունների, ինչպես նաև տարբեր մշակույթների ներկայացուցիչների շփման, հաղորդակցման գործուն միջոց: **Անգլերեն լեզվի** տիրապետումը հանդիսանում է քաղաքացու մրցակցային առավելությունը բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևավորելիս:

Արտադրության, գիտության, կրթության և մշակույթի վերածնունդն ու զարգացումը, ինչպես նաև համաշխարհային հանրության հետ Հայաստանի մասնակցությունը աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական մարտահրավերների դիմագրավմանն ու գործընթացների իրականացմանը մեր երկրում

առաջացնում են **հայ երիտասարդության կողմից անգլերեն լեզվի ազատ տիրապետումն ապահովելու խնդիր և անհրաժեշտություն**:

Օտար լեզուների և մասնավորապես անգլերենի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Դժվար է գերագնահատել օտար լեզուների ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրանց կիրառական նշանակությունը' որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց: Օտար լեզուների իմացությունը կարևոր է նաև առօրյա կյանքում, միջանձնային և միջմշակութային շփումների ընթացքում: Այս առումով առաջնային պայման է պատշաճ մակարդակով օտար լեզուների' հատկապես որպես միջազգայնորեն հաստատված լեզուների տիրապետումը: Տրամաբանական է, որ ներկայումս, աշխարհի քաղաքակիրթ երկրներում օտար լեզվի դասավանդումը դրված է շատ լուրջ հիմքերի վրա, և այժմ նույնիսկ ոչ թե երկլեզվությունը, այլ բազմալեզվությունն է կրթության համակարգում շրջանառվող առանցքային հասկացությունը:[Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Անգլերեն, Երևան, Տիգրան Մեծ, 2006:]

Օտար լեզվի ուսուցումը իրականացնելիս նախ և առաջ պետք է հետևել օտար լեզվի ուսուցման առանձնահատկություններից բխող հիմնական սկզբունքներին: Դա շատ կարևոր և նշանակալի պայման է հաջողության հասնելու համար: Հիմնական սկզբունքներն են.

- ուսուցումը, դաստիարակությունը պետք է իրականացնել՝ ելնելով հաղորդակցական-ճանաչողական մոտեցումներից,
- ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է ապահովի ուսումնառության դրդապատճառների ապահովումը,
- պետք է կիրառել սովորողին ծանոթ լեզուների լեզվական երևույթների ձևի և բովանդակության բազմապիսի կապեր,
- սովորողների մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը պետք է զուգակցել լեզուների ուսուցման գործընթացում դաստիարակչական խնդիրների իրականացմանը:

Ժամանակակից լեզվական կրթության և անգլերեն լեզվի ուսուցման առանձնահատկություններն են.

Միջմշակութայնությունը - հնարավորություն է տալիս դպրոցականին իրավահավասար գործընկեր լինել օտար լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում

Միջառարկայնությունը - օտար լեզվով ձեռք բերել գիտելիքներ տարբեր առարկաներից՝ գրականությունից, մաթեմատիկայից, արվեստից, աշխարհագրությունից և այլն:

Միջառարկայական ինտեգրում - օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են սովորողների կողմից աշխարհի և երևույթների միասնական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքներ և գաղափարներ համադրելը:

Բազմամակարդակությունը - ձևավորել հմտություններ օտար լեզվով գրելու, կարդալու, խոսելու, ունկընդրելու:

Բազմագործառնություն - կարող է հանդես գալ և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց ձեռք բերել գիտելիքներ տարբեր բնագավառներից:

ՀՀ կրթական համակարգում անգլերեն լեզվի ուսումնասիրման և դասավանդման համակարգի զարգացման նպատակներն են՝

- սովորողի բազմակողմանի զարգացումը անգլերեն լեզվի՝ հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոցով,
- անգլերեն լեզվի հանրայնացման և Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում անգլերեն լեզվի դասավանդման և ուսումնասիրման համակարգի զարգացման հիմնախնդիրների համակարգային լուծումները,
- անգլերեն լեզվի կրթական ծրագրերի բովանդակության, ինչպես նաև անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկայի արդիականացումը,
- անգլերեն լեզու դասավանդողների աշխատանքի որակի բարձրացումը,
- հանրամատչելի տեղեկատվական պաշարների զարգացումը, որն անհրաժեշտ է կրթական ծրագրերի, այդ թվում նաև էլեկտրոնային ուսուցման, սովորողների և մանկավարժների գործունեության իրականացման համար,
- բարձրացնել կրթական համակարգի բոլոր աստիճաններում (նախադպրոցական, դպրոցական, բուհական) անգլերեն լեզվի ուսուցման որակը:

Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրն է ապահովել կրթության որակը՝ պահպանելով նրա հիմնարար բնույթը և բավարարելով անձի, հասարակության և պետության արդիական ու հեռանկարային պահանջմունքները:

Լեզուն մշակույթի հայելին է: Օտար լեզուների ուսուցման առաջնային նպատակն է զարգացնել աշակերտների բանավոր և գրավոր հաղորդակցման

կարողությունները և միջմշակութային իրազեկությունը՝ հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, պահանջմունքները, հետաքրքրություններն ու նախասիրությունները: Բացի այդ, օտար լեզուների ուսուցումը աշակերտներին տալիս է գիտելիքներ տվյալ երկրի, ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի ամենաբնորոշ երևույթների մասին:(Օտար լեզուները Հայաստանում ՀՀ Կրթության և գիտության նախարարություն Կրթության ազգային ինստիտուտ: Գիտամեթոդական հանդես):

Օտար լեզվի գործնական նպատակը ծրագրի սահմաններում հաղորդակցության հիմք ստեղծելն է, այսինքն հասնել այն բանին, որ սովորողը կարողանա շփման կոնկրետ ոլորտներում և որոշակի իրադրություններում հանպատրաստից հաղորդակցվել օտար լեզվով նախատեսված թեմաների շրջանակում (բանավոր խոսք՝ ունկնդրել և խոսել, գրավոր խոսք՝ ընթերցել և գրել):

Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունն ուղղված էր աշակերտների ներգրավվածության խնդրի բացահայտմանը, ինչպես նաև այն մանկավարժական մեթոդների առանձնացմանը և գործնական կիրառությանը, որոնք կարող են առավել արդյունավետ կերպով ազդեցություն թողնել աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացման վրա: Տվյալ խնդիրը բավականին **արդիական է** ժամանակակից դպրոցի և առհասարակ ուսումնական գործընթացների պարագայում, քանի որ անհրաժեշտություն է զգացվում մշտապես ուշադրության կենտրոնում պահել այն գործոնները, որոնք նպաստում են դպրոցում սովորող աշակերտների ներգրավվածության բարձրացմանը, կամ էլ խոչընդոտում են դրա դրսևորմանը դասապրոցեսում: Դասապրոցեսում աշակերտների ներգրավվածությունը այն առանցքային խնդիրներից մեկն է, որն ապահովում է նյութի ուսուցանման և աշակերտների կողմից դրա խորը և հիմնային յուրացման արդյունավետությունը և լիարժեքությունը: Այդ իսկ պատճառով այս հիմնահարցը միշտ գտնվում է ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Դպրոցում մշտապես արդիական խնդիր է ուսումնական այնպիսի ռազմավարությունների, մեթոդների և հնարների մշակումը և գործնական կիրառումը, որոնք ուղղված են աշակերտների ներգրավվածության խթանմանը: Այս պարագայում մանկավարժի, դասավանդող ուսուցչի կարևոր խնդիրներից է դասի ժամանակ ստեղծել այնպիսի մթնոլորտ, որի դեպքում դասարանի բոլոր աշակերտները ներգրավված կլինեն դասապրոցեսի մեջ, ակտիվություն և հետաքրքրություն կցուցաբերեն ուսուցանվող նյութի նկատմամբ:

Հետազոտության օբյեկտն է հանդիսանում մեկ դասարանում սովորող աշակերտների ամբողջականությունը:

Հետազոտության նպատակը: Բարձրացնել սովորողների հետաքրքրությունն ու շարժառիթը ուսումնական նյութի նկատմամբ՝ ապահովելով սովորողների ներգրավածությունը ուսումնական գործընթացին համագործակցային մեթոդի միջոցով:

Հետազոտության խնդիրը: Մեթոդի արդյունավետ կիրառումը դասապրոցեսին. բարձրացնել աշակերտների ներգրավածությունը ողջ դասի ընթացքում և դրա արդյունքում հասնել ցանկալի վերջնարդյունքի:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Հետազոտությանը բաղկացած է ներածությունից, գրական ակնարկից, փորձարարական հետազոտություններից, վերլուծությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, կազմում է 28 էջ:

1. Գրական ակնարկ

«Ասա ինձ, և ես կմոռանամ,
սովորեցրու ինձ՝ հնարավոր է հիշեմ,
ներգրավվիր ինձ և ես կսովորեմ»:
Բենջամին Ֆրանկլին

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով,

կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ներգրավվածությունը, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Մանկավարժության և հոգեբանության մեջ գոյություն ունեն «ներգրավվածություն» հասկացության բազմաթիվ մեկնաբանություններ:

Բոնդարևսկին հետևյալ կերպ է ներկայացնում ներգրավվածության խնդիրը դպրոցում. «Ներգրավվածությունը բնորոշվում է աշակերտի պատրաստակամությամբ, պահանջով, ցանկությամբ և պարտադրանքով՝ մասնակցություն ցուցաբերել ուսումնական գործընթացում և որոշակի հաջողություններ գրանցել այդտեղ, նպաստելով հասկացության և ընկալման առավել բարձր մակարդակների հաստատմանը և ամրապնդմանը, կայուն մտածելակերպի և գիտելիքների ստեղծմանը»: Ի. Կոնը դիտարկում էր ներգրավվածությունը, որպես «հատուկ տեսակի ակտ, որը գալիս է … անձի միջից», ինչպես նաև նա նշում էր, որ «ներգրավվածությունը շատ յուրահատուկ ֆենոմեն է, երբ մեր բանականությունն ամբողջ ուշադրությամբ և նվիրումով տրվում է գործին, մեր էմոցիանրը և զգացմունքները հասնում են ծայրահեղության, մեր ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացած է, իսկ վարքը՝ համապատասխանում է իրավիճակին»: [Кон И., Психология ранней юности: книга для учителя. М: Просвещение, 1989, էջ 96-97):]

Այսպիսով, ամենալայն իմաստով, ներգրավվածությունը կարելիէ հասկանալ, որպես անձի ներառվածության մակարդակ այս կամ այն գործում, իրավիճակում:

Առհասարակ, ներգրավվածություն տերմինը բավականին բարդ և բազմակողմանի հասկացություն է, որը միանշանակ չի կարող ընկալվել՝ ելնելով դրա ուսումնասիրությունների բազմազանությունից և բազմակողմանի բնույթից: Այն ներառում է ոչ միայն ճանաչողության ներքին ասպեկտը, որը բխում է անձի հատկություններից և որոշվում է աշակերտների ուսումնական ձգտումներից և մոտիվացիայից: Ներգրավվածությունը նաև դիտարկվում է համատեքստային փոփոխականների շրջանակներում, ինչպիսին են, օրինակ, արտաքին միջավայրը, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների որակը և ինտենսիվությունը, ընտանիքի և համադասարանցիների ազդեցությունը, մշակութային և էկոլոգիական գործոնները և այլն:

Ներգրավվածություն տերմինը մանկավարժության մեջ հաճախ կիրառվում է՝ ցույց տալու համար աշակերտների պատրաստվածությունը և

պատրաստակամությունը մասնակցելու առօրյա դպրոցական միջոցառումներին, մասնակցել դասերին, ներկայացնել անհրաժեշտ ուսումնական աշխատանքները, կատարել ուսուցչի ցուցումները և այլն:

Շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ անձը կձգտի ներգրավվել ուսումնական գործընթացում, երբ գտնվի իրեն աջակցող և իր պահանջմունքները բավարարող միջավայրում: Փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ և համագործակցության սկզբունքի վրա հիմնված հետադարձ կապը աշակերտների և ուսուցչի միջև առաջին գործոնն է, որը նպաստում է ներգրավվածության բարձր մակարդակի ապահովմանը:

Ներգրավվածություն տերմինը գնալով առավել հաճախ կիրառվում է ուսուցման և մանկավարժության ոլորտի մասնագետների կողմից: Հայտնի փաստ է , եթե աշակերտը ներգրավված է դասի մեջ, նա առավել արդյունավետ է յուրացնում ուսուցչի կողմից փոխանցվող գիտելիքները, նպաստում է ամբողջ դասարանի արդյունավետ աշխատանքին, հաճույք է ստանում դասից և գոհացնում է ուսուցչին: Սակայն այս պարագայում մանկավարժի համար զգալի բարդ խնդիր է ապահովել դասարանում իր աշակերտների ներգրավվածությունը դասին, կիրառել այնպիսի տեխնիկաներ և մեթոդներ, որոնք կխթանեն աշակերտների ներգրավվածությունը:

Մանկավարժության մեջ հայտնի է, որ ուսումնական և դաստիարակչական նպատակները և խնդիրները կարող են հաջողությամբ իրագործվել միայն այն դեպքում, երբ աշակերտը հանդիսանում է ուսումնական գործունեության սուբյեկտը, այսինքն ուսումնական գործընթացում ցուցաբերում է նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, ներքին մոտիվացիա: Այսինքն, աշակերտի ներգրավվածությունը դասին միշտ անմիջական կերպով կապված է սուբյեկտի ակտիվության և ուսումնական հետաքրքրության հետ:

Այս կապակցությամբ մանկավարժի հիմնական ջանքերը դասի ընթացքում, որպես կանոն հանգում են նրան, որպեսզի նա ակտիվացնի աշակերտներին, հետաքրքրի նրանց և մոտիվացնի հետագա գործողություններին: Այսինքն, մանկավարժի խնդիրն է անել այնպես, որպեսզի երեխաները «դուրս չմնան» դասից, այլ հետաքրքրություն ցուցաբերեն ուսուցանվող նյութի և առաջարկվող հանձնարարությունների նկատմամբ: Հենց աշակերտների ակտիվությունն է դասի ժամանակ վկայում դասապրոցեսի արդյունավետության մասին:

Այս հետազոտության շրջանակներում փորձելու եմ ուսումնասիրել աշակերտների նրգրավվածության խթանման խնդիրը, ընդ որում այս խնդրի լուծման

և վերլուծության հարցում առաջնորդվել եմ աշակերտ - ուսուցիչ, ինչպես նաև աշակերտների միջև համագործակցության ձևավորման սկզբունքով: Սա նշանակում է, որ ուսումնական գործընթացում բավականին դժվար է խթանել աշակերտների ներգրավվածությունը դասին միայն նրանց ակտիվացման միջոցով: Այս աշխատանքի ընթացքում շեշտադրվել է առավելապես համագործակցության սկզբունքի կիրառության առավելությունները՝ աշակերտների ներգրավվածությունը ապահովելու հարցում: Այսինքն, դիտարկել եմ ներգրավվածության ֆենոմենը համատեղ ուսումնական գործունեության մեջ ոչ թե ուսուցման մեթոդի համատեքստում, այլ աշակերտի և մանկավարժի միջև փոխազդեցության և համագործակցության կազմակերպման հիման վրա:

«Սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից,
նաև երբ սովորեցնում են ուրիշի»:
Կոմենսկի
«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի
գալիս առանց համագործակցության»:
Ջեյմս Ուայթսոն

Մեթոդ (հուն. methodos) բառը ամենալայն իմաստով նշանակում է «ճանապարհ դեպի որևէ նպատակ»: Այն սուբյեկտի հասարակական գործունեության կարգավորված, կազմակերպված եղանակ է: Ինչպես ընդունված է ասել, ոչ միայն հետազոտության արդյունքը, այլև դեպի այն տանող ճանապարհը (մեթոդը) պետք է լինի ճշմարիտ: Ֆ. Բեկոնը մեթոդը համեմատել է լուսամփոփի հետ, որը մթության մեջ լուսավորում է ճանապարհը: Մեթոդն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտի համար՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակ է:

Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Մեր ժամանակներում կրթությունը շատ կարևոր է, միայն լավ կրթության դեպքում կարելի է դառնալ լավ մասնագետ, որը կլինի պահանջված իր ոլորտում: Մեր՝ ուսուցիչներիս խնդիրն է այնպես անել, որ բոլոր երեխաներն էլ սովորեն: Իսկ ինչպես անել,որ նրանք սովորեն: Ինչպիսի մոտեցումներ պետք է ցուցաբերել, որպեսզի կարողանանք ներգրավելով, հետաքրքրելով սովորեցնենք բոլորին: Սովորողները ունեն տարաբնույթ առանձնահատկություններ, մեկը արագ է ընկալում, մյուսը՝ ավելի դանդաղ. հետևաբար մենք ՝ ուսուցիչներս, պետք է ունենանք համապատասխան մեթոդներ՝ օգնելու, աջակցելու, ուղղորդելու սովորողներին: Պետք է դասապրոցեսը կազմակերպել այնպես, որ նրանք կարողանան ինքնուրույն սովորել դասը, անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը, միմյանց հետ փոխանակեն կարծիքներ: [Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ: Երևան: «Անտարես»: 2006: 122 էջ:]

«Եթե ուզում ես սովորածդ հիշել, պատմի՛ր ուրիշին», հաճախ ենք լսել այս արտահայտությունը և ինքներս խորհուրդ տվել: Պարզ է, որ սովորողները պետք է սովորած դասը պատմեն մի քանի անգամ, որպեսզի հիշեն: Ինչպես նշել է հռոմեական պետական գործիչ, փիլիսոփա Սենեկա Կրտսերը՝ «Սովորեցնելով ուրիշներին, սովորում ենք մենք ինքներս»: Այդ հնարավորությունը, իմ կարծիքով, նրանց տալիս է համագործակցային ուսուցումը: Այն լուծում է սովորողների ներգրավվածության, հետևաբար նաև առաջընթացի հարցերը: Այն աշակերտները, որոնք ավելի դանդաղ են սովորում,ունեն ավելի թույլ առաջադիմություն, համագործակցային խմբում ,ընկերներից լսելով նյութը մի քանի անգամ ,սկսում են հասկանալ,հետաքրքրվել ու սովորել: Ավելի բարձր առաջադիմություն ունեցողները, փորձելով բացատրել թույլ առաջադիմություն ունեցողներին, կրկնելով , սովորեցնելով ավելի խորքային են հասկանում: Այսինքն՝ ըստ Դիքենսի՝ կատարելագործվում են ՝ կատարելագործելով ուրիշներին: Համագործակցային մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Համագործակցային

ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում: Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ:

Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, 340 մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և

նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից:

Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են.

նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
աշխատանք փորձագիտական խմբում,
աշխատանք ուսումնական խմբում,
ավարտական աշխատանք,
ամփոփում:

3. **Շրջագայություն պատկերասրահում:** Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. **Երեք բանալի և մեկ կողպեք:** Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

5. **Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց** ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և

առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

«Ոչ ոք ոչ ոքի չի կրթում, ոչ էլ մենք ենք մեզ դաստիարակում. մենք միմյանց կրթում ենք հաղորդակցության մեջ ՝ այս աշխարհում ապրելու համատեքստում»: Պաուլո Ֆրեյրի

Պաուլո Ֆրեյրը համոզված էր, որ սովորելը չի փոխանցվում մի մարդուց մյուսին: Փոխարենը դա կառուցելու գործընթաց է մարդկանց միջև: Հետևաբար, ուսման գործընթացում ամենակարևորը ուսանողների մասնակցությունն է: Նա հավատում էր, որ աշխարհը կարիք չունի գաղափարներ կրկնող մարդկանց. աշխարհը կարիք ունի ստեղծողների, որոնք ստեղծում են նոր հնարավորություններ:

Նրա տեսանկյունից կրթության ամենակարևոր մասերն են ստեղծագործական խրախուսումը և դեպի անհատական և կոլեկտիվ ազատություն տանող ճանապարհի մաքրումը: Ես նույնպես համակարծիք եմ Պաուլո Ֆրեյրի հետ և կարծում եմ, որ համագործակցային մեթոդով աշխատելիս սովորողները ստանում են այդ ազատությունը և ներգրավվում են դասապրոցեսին: [Ուսուցման արդյունավետ մեթոդներ, հնարներ, վարժություններ: Կրթության ազգային ինստիտուտ, 2008]

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն.
- Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ:
- Սովորողի ջանքերն ուղղվում են համատեղ հասնելու ընդհանուր նպատակին :
- Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:

Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

դեմ առ դեմ փոխազդեցություն.

Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:

անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

խմբային գործընթացի մշակում:

Խմբային գործընթացը, խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր:





Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրունության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

«Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

«Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»:

2. Փորձարարական հետազոտություն

2.1. Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի №3 հիմնական դպրոցի 5-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 29 աշակերտ՝ 13 աղջիկ և 16 տղա: Անգլերեն անցնում են շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 2-րդ կամ 4-րդ ժամերին:

Դասարանի աշակերտների հիմնական մասը ներգրավված են դասապրոցեսին: Ես իմ հետազոտական աշխատանքը որոշեցի կիրառել այս դասարանում, որպեսզի **բոլոր** (աշակերտներ, ովքեր ուսուցանվող նյութի ներգրավվածության շուրջը ունեն ուշադրության կենտրոնացման խնդիր) աշակերտները ներգրավվեն դասապրոցեսին:

Դասարանում միջանձնային հարաբերությունները կայացած են, քանի որ փոխշփումներն ու փոխօգնության պատրաստակամությունը բավական բարձր հիմքերի վրա են դրված: Հետազոտության ժամանակ կիրառվող մեթոդը, հնարները և փորձերը կբարձրացնեն առարկայի հանդեպ հետաքրքրությունը և բոլոր աշակերտները կներգրավվեն դասապրոցեաում:

Հետազոտական աշխատանքում ներառել եմ 2 դասաժամ:

Աշակերտների առաջադիմության բարձրացման ուսումնասիրությանն ուղղված մանկավարաժական հետազոտությունը իրականացվել է բնական միջավայրում, այսինքն, տվյալ հետազոտության օբյեկտն է հանդիսացել դասարանը, որում դասավանդում եմ, իսկ բուն հետազոտության հետ կապված բոլոր գործողությունները, մոտեցումները և մեթոդները գործածվել են անմիջականորեն տվյալ դասանաում անցկացված դասերի ընթացքում՝ բնականոն դասապրոցեսի շրջանակներում:

2.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր՝ «Hairy Henry's Holiday» (part 1) (տե՛ս դասպլան-1 էջ՝ 23): Դասը սկսեցի ջերմ որջույնով և կատարեցի աշակերտների հաշվառում: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Առաջին հետազոտական դասի ընթացքում աշակերտները ծանոթացել են նոր ուսումնական թեմայի հետ: Ուսումնական նյութի նրկայացման արդյունքում աշակերտնրը պետք է յուրացնեին նոր բառապաշար, կարողանաին խոսել թեմայի մեջ ամփոփված տեղեկատվության շուրջ, ինչպես նաև հաղորդակցվել միմյանց հետ բանավոր խոսքի միջոցով, ընդ որում ուսումնասիրված թեմայի շրջանակներում: Մատուցվող նյութը առավել պարզ և հեշտ յուրացնելու համար աշակերտները օգտվել են այնպիսի դիդակտիկ նյութերից, ինչպիսիք են թեմատիկ քարտեր, պարզ նկարներ և այլն: Դասի նպատակն էր, բացի նյութի արդյունավետ ուսուցումը՝ զարգացնել նաև աշակերտների համագործակցային և հաղորդակցական հմտությունները և կարողությունները, սովորեցնել նրանց աշխատել խմբում և այդ միջոցով առավել

բարձր արդյունքների հասնել ուսումնական գործընթացում: Առաջադրված նպատակներին հասնելու համար առաջին դասի ընթացքում դասարանը բաժանվել է 2 խմբերի, և նրանցից յուրաքանչյուրին առաջադրվել է ընթերցել նոր նյութը, գրառումներ կատարել դրա շուրջ և բանավոր երկխոսություններ ձևավորել՝ ուսուցչի կողմից առաջադրված հարցադրումների հիման վրա: Խմբային աշխատանքի արդյունքում աշակերտները պետք է զույգերով ներկայացնեին յուրացված նյութը՝ բանավոր երկխոսությունների միջոցով: Ողջ ընթացքում վեր եմ հանել դասանյութի վերաբերյալ ուղղորդիչ հարցադրումներ՝ նպաստելու համար աշակերտների ակտիվացմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել զգալի պասիվ աշակերտների վրա, և փորձել եմ հատուկ հարցերի և հանձնարարությունների միջոցով առավելագույն կերպով ընդգրկել և ներգրավվել նրանց խմբային աշխատանքի մեջ: Դասի վերջին հատվածում աշակերտներին առաջարկվել էր դիտել կարճ տեսաֆիլմ՝ ամփոփելու դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները և դրանք խորացնելու համար: Տեսաֆիլմի դիտումը զգալի ակտիվություն և հետաքրքրություն առաջացրեց խմբերում, գրեթե բոլոր աշակերտները հետաքրքրությամբ դիտեցին ֆիլմը և կարողացան որոշակի կարևոր ինֆորմացիա դուրս բերել դիտված նյութից: Դիտման ավարտին աշակերտներին առաջարկվեց մի շարք հարցեր՝ ստուգելու համար նյութի յուրացման նրանց մակարդակը: Դասի արդյունքը ամրապնդելու և խմբային աշխատանքի կարողությունները ամբողջականացնելու համար աշակերտներին հանձնարարվեց տանը գործնական աշխատանք պատրաստել ուսումնասիրված թեմայի շուրջ, որը նրանք պետք է ներկայացնեին հաջորդ դասին: Աշակերտներին խրախուսեցի դասին ակտիվորեն մասնակացելու համար և կատարեցի գնահատում:

Ամփոփելով առաջին հետազոտական դասի արդյունքները, նշենք, որ դասը բավականին ակտիվ անցավ, աշակրտների մեծամասնությունը զգալի կերպով հետաքրքրված էին դասապրոցեսով և, հատկապես, ակտիվություն ցուցաբերեցին խմբային աշխատանքների շրջանակներում: Յուրաքանչյուր աշակերտ փորձում էի իր ունակությունների սահմաններում մասնակցել դասին, կատարել հանձնարարությունները և դրական արդյունք ապահովել իր խմբի համար:

Միաժամանակ, նկատվեց նաև որոշ աշակերտների հարաբերական պասիվություն, որը պայմանավորված էր աշակերտների անձնային հատկություններով: Ցածր ներգրավվածություն դրսևորած աշակերտները սեփական նախաձեռնությամբ չէին մասնակցում նյութի ներկայացմանը և քննարկմանը,

հարցերին արձագանքում էին միայն այն ժամանակ, երբ անմիջականորեն դիմում էի նրանց:

2.3. Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր «Hairy Henry's Holiday (part 1) (տե'ս դասպլան-2 էջ՝ 26): Երկրորդ հետազոտական դասի ընթացքում շարունակվեց նախորդ դասի ռազմավարությունը՝ կիկրառելով համագործակցության սկզբունքը աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար: Այս դասի նպատակն էր աշակրտներին ծանոթացնել նոր ուսումնական թեմայի և դրան համապատասխան նոր բառապաշարի հետ, որը նրանք կարող են անկաշկանդ օգտագործել իրենց բանավոր խոսքում:

Դասի ընթացքում շարունակվել է խառը խմբերով աշխատելու սկզբունքը, որը նախորդ դասի ընթացքում բավականին մեծ դրական արդյունքի բերեց: Այս դասին դասարանը բաժանվել էր խառը խմբերի, որոնց մեջ ներգրավված են եղել ինչպես բարձր, այնպես էլ ցածր և միջին առաջադիմությամբ աշակերտներ, ընդ որում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները գործնական աշխատանքի ընթացքում պետք է օգնեին և ուղղորդեին նաև ցածր և միջին առաջադիմությամբ երեխաներին: Դասի ընթացքում խմբերը դիտեցին կարճ տեսաֆիլմ ուսումնասիրվող թեմայի շուրջ, որից հետո նրանցից յուրաքանչյուրին տրվեց աշխատանքային թերթիկ՝ համապատասխան հանձնարարություններով: Նաև աշակերտներին հանձնարարվել էր կարդալ ներկայացված դասի տեքստի մի հատված և ներկայացնել իրենց նախընտրած տարբերակով: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է մասնակցեր աշխատանքին և իր բաժինը ներկայացներ խմբային աշխատանքի արդյունքում:

Տեսաֆիլմի դիտումը զգալի բարձր տրամադրություն և աշխուժություն հաղորդեց դասարանում, աշակերտները հետաքրքրությյամբ էին դիտում, փորձում հասկանալ և մտապահել ստացված տեղեկատվությունը, ինչը հետո արտահայտվեց ուսուցիչ-աշակերտ հարց-պատասխան սկզբունքով կազմակերպված քննարկման արդյունքում: Խմբային աշխատանքի ընթացքում ևս նկատվեց զգալի ակտիվություն և լարվածության աստիճանաբար պակասում որոշ աշակերտների մոտ: Շատերը առավել ակտիվ և անկաշկանդ էին կարողանում աշխատել խմբի մյուս անդամների հետ՝ հասկանալով և գիտակցելով պատասխանատվության իրենց բաժինը: Մյուսները

ավելի պասիվ էին, սակայն իմ հորդորով օգնություն էին ստանում խմբի առավել ակտիվ և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներից: Ընդհանուր առմամբ, խմբերը բավականին լավ հանդես եկան, կարողացան միասնական աշխատանքի արդյունքում արժանանալ բարձր գնահատականի, սովորեցին օգնել միմյանց և համագործակցել: Հետազոտական դասի արդյունքներով ստացվեց հետևյալ պատկերը՝ որ մի աշակերտ անմասն չմնաց ընդհանուր աշխատանքից և ցուցաբերեց որոշակի ակտիվություն, ընդ որում այն աշակերտները, ովքեր հարաբերական պասիվ էին, արդեն այս դասաժամի ընթացքում բավականին ակտիվ և հետաքրքրված էին, ուղղորդվում էին խմբի մյուս անդամների կողմից, ինչի շնորհիվ նրանց հաջողվեց հասնել արդյունքի՝ հանձնարարությունների կատարման ժամանակ:



3. Վերլուծություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Որպես հետազոտության օբյեկտ ընտրվել էր 5-րդ դասարանը: Հետազոտության շրջանակում կատարեցի համագործակցային մեթոդով երկու դասաժամ:

Համագործակցային ուսուցումը երեխային մղում է ուշադիր լինել և լավ սովորել, համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, աշակերտին մասնակից դարձնելով գիտելիքի ձեռքբերմանը:

Խմբային աշխատանքի և համագործակցության սկզբունքի կիրառումը դասապրոցեսում զգալի կերպով օժանդակում է աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, քանի որ խմբերի ներսում աշխատելիս աշակերետները շատ ավելի ուշադիր և հետաքրքրված են աշխատում՝ գիտակցելով սեփական կարևորությունը խմբի համար: Հետազոտական դասերի արդյունքում հաջողվեց հասնել հետազոտության սկզբում առաջադրված նպատակին՝ խթանել աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը՝ կիրառելով համագործակցուքյան սկզբունքը: Ընդ որում, շեշտադրվում էր համագործակցությունը ինչպես աշակերտների և իմ, այնպես էլ հենց աշակերտների միջև: Այդ նպատակով դասերի ընթացքում փորձարկվեցին տարբեր համագործակցային և ակտիվություն խթանող եղանակներ, մասնավորապես՝ հարցպատասխան սկզբունքը, քննարկումներ կազմակերպելու սկզբունքը, տեսաֆիլմեր և թեմատիկ տեսահոլովակներ դիտելու սկզբունքը: Բոլոր կիրառված մեթոդները հնարավորություն տվեցին արդյունավետ կերպով ազդել աշակերտների ներգրավվածության վրա, ակտիվություն հաղորդեցին աշակերտների ուսումնական գործունեությանը:

Այսպիսով, աշակերտների՝ դասապրոցեսում ներգրավվածության խնդիրը կարևոր գործոն է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը ապահովելու համար: Եվ այս պարագայում շատ կարևոր գործոն է հանդիսանում ոչ միայն աշակերտների անձնային հատկությունները և որակները, որքան հենց ուսուցչի նպատակաուղղված գործունեությունը, հատուկ մանկավարժական մեթոդների կիրառությունը, որոնք արդյունավետ կերպով կարող են խթանել դասարանում աշակերտների ակտիվությունը դասերի ժամանակ, էլ ավելի ամրապնդել ակտիվ աշակերտների առաջընթաց ուսումը, ինչպես նաև հիմքեր ապահովել թույլ և մոտիվացիայի պակաս ունեցող աշակերտների ուսումնական գործունեությունը: Տվյալ հետազոտության ընթացքում փորձարկվեց խմբային աշխատանքի կիրառման սկզբունքը՝ համագործակցային մեթոդի հիման վրա, որը ենթադրում էր ակտիվ հաղորդակցություն ինչպես աշակերտ-ուսուցիչ ուղղությամբ, այնպես էլ աշակերտ-աշակերտ հարթակում: Հաջողվեց զգալի դրական արդյունքների հասնել աշակերտների ակտիվության և ներգրավվածության թխանման գործում՝ կիրառելով թեմատիկ պաստառներ և քարտային նյութեր, աշակրտներին տեսաֆիլմեր

և թեմատիկ տեսահոլովակներ ցուցադրելով: Այսպիսի միջոցների կիրառումը՝ ակտիվ և հետաքրքրաշարժ քննարկումների, առաջադրանքների և հանձնարարությունների ուղղորդմամբ, նպաստեցին դասարանի աշակերտների ակտիվության խթանմանը: Նրանք առավել մեծ ուշադրությամնբ և հետաքրքրությամբ էին հետևում դասի ընթացքին, ձեռք էին բերում նոր գիտելիքներ և առաջարկված հանձնարարությունների շնորհիվ կարողանում էին մտապահել և ամրապնդել ստացված գիտելիքները: Խմբային աշխատանքը նույնպես շատ մեծ խթան հանդիսացավ աշակերտների ակտիվության ձևավորման համար, քանի որ յուրաքանչյուր աշակերտ, նույնիսկ ամենաթույլ և մոտիվացիայի պակաս ունեցողը, կարողացավ ներգրավվել խմբային աշխատանքին համագործակցային սկզբունքների կիրառման շնորհիվ:

Վերլուծելով ուսուցման տեսության և պրակտիկայում համագործակցային ուսուցման մեթոդների օգտագործման խնդրի վիճակը, մենք կարող ենք եզրակացնել, որ սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին ոչ ավանդական ձևերն են, որոնց ընթացքում ուսանողները ընդլայնում են իրենց գիտելիքները, ինչը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել և ներգրավվել դասապրոցեսին: Շատ կարևոր հանգամանք է նաև դասի ժամանակ տիրող էմոցիոնալ մթնոլորտը, բարյացկամ և ընկերական միջավայրի ձևավորումը, որը մեծ ազդեցություն է թողնում աշակերտների ներգրավվածության մակարդակի վրա:

Գրականության ցանկ

[1] Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ.Մասնագիտական զարգացման ձեռնարկ 286 ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004: 178 էջ:
[2] Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Անգլերեն, Երևան, Տիգրան Մեծ, 2006:
[3] Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ: Երևան: «Անտարես»: 2006: 122 էջ:
[4] Օտար լեզուները Հայաստանում ՀՀ Կրթության և գիտության նախարարություն Կրթության ազգային ինստիտուտ: Գիտամեթոդական հանդես
[5] Ուսուցման արդյունավետ մեթոդներ, հնարներ, վարժություններ: Կրթության ազգային ինստիտուտ, 2008
[6] Кон И., Психология ранней юности: книга для учителя. М: Просвещение, 1989
[7] Никитина, Л. А. Педагогическое наследие Г. Н. Прозументовой как ориентир для педагогической науки и практики / Л. А. Никитина, С. И. Поздеева // Научнопедагогическое обозрение (Pedagogical Review). – 2015. – Вып. 4 (10).
[8] Прозументова, Г. Н. Педагогика совместной деятельности: смысловые контексты и образовательная реальность // Школа Совместной деятельности: разработка образовательных программ в развивающейся школе. Кн. 5. – Томск : Дельтаплан, 2002

Հավելված

Դ ա ս ա պ լ ա ն 1

Ուսուցիչ՝ Մանուկյան Սոնա

Առարկա՝	**Անգլերեն**	**Ամսաթիվ**	**16.05.22**	**Կիսամյակ**	**II**	**Դասարան**	**V^{ա}**
Թեմա՝	**Hairy Henry's Holiday (part 1)**						
Օգտագործվող նյութեր՝	5-րդ դասարանի անգլրեն լեզվի դասագիրք, տետրեր, գրենական պիտույքներ, պռոեկտոր, աշխատանքային թերթիկներ						
Դասի նպատակը՝	● Նոր բառապաշարի զարգացում: ● Հարցերին պատասխանելու կարողությունների զարգացում: ● Կապակցված բանավոր խոսք կազմելու հմտությունների զարգացում: ● Քերականական գիտելիքների զարգացում: ● Միմյանց հետ հաղորդակցվելու, խմբով աշխատելու և համագործակցելու կարողությունների զարգացում:						
Վերջնարդյունքները	<u>Աշակերտը կկարողանա՝</u> ● Սովորել նոր բառեր: ● Պատասխանել պարզ հարցերի: ● Բանավոր հաղորդակցվել: ● Դրական տեղաշարժ կունենա:						

Գործողություններ (ժամ/տևող-ություն) 45ր.	**Ուսումնական գործունեություն** **Աշակերտներ**	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** **Ուսուցիչ**	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** (հանձնարարության վերջնաարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Մուտք, ներկա-բացակա /3ր/	Աշակերտները բացում են իրենց գրքերը, տնային հանձն. ու բառատետրերը:	Դասարանի ողջունում հաճախումների գրանցում տնային առաջադրանքների, գրքի և բառարանի առկայության ստուգում:	Աշակերտների ուշադրության կենտրոնացում դասին:

Սկիզբ /5-7ր/	Լսում և ըմբռնում են դասի նպատակները:	Կկազմեմ երկու խումբ: Եվ կներկայացնեմ ու կպարզաբանեմ տվյալ դասի նպատակը՝ գրատախտակին գրելով դասի թեման:	Բաժանել զույգերի: Հանձնարարել կազմեն հարց+պատասխան տվյալ թեմայի վերաբերյալ և զույգերով ներկայացնեն:
.	Աշակերտները ծանոթանում են աշխատանքային թերթիկներին:	Աշակերտներին կբաժանեմ հարցաթերթիկներ:	Այս փուլի նպատակն է ուղղորդել աշակերտներին և նրանց օգնել ճիշտ ըմբռնել առաջադրանքը:
Ընթացք /25-30ր/	Միմյանց հետո համագործակցելով՝ աշակերտները կատարում են առաջադրանքը:	Կատարում եմ խթանում: Փորձում են հարցադրումների միջոցով վեր հանել իրենց գիտելիքները: Այնուհետև հանձնարարում եմ ընթերցել երկխոսությունը և առաջարկում նմանատիպ երկխոսություններ կազմել զույգերով:	Այս փուլի նպատակն է աշակերտների մոտ զարգացնել համագործակց ային աշխատանքը:
	Աշակերտները կդիտեն Big Ben-ի մասին տեսանյութ, որտեղ գնացել էր հեքիաթի հերոսը: Դիտելու ընթացքում նշումներ կկատարեն:	Այնուհետև կառաջարկեմ դիտել Big Ben-ի մասին:	Այս փուլի նպատակն է նախապատրաս տել հաջորդ դասին:

Ավարտ /5ր/	Աշակերտները դիտում են տեսանյութը և պատասխանում թեմայի վերաբերյալ հարցերին: Պատասխանում են հարցերի	Տեսանյութը դիտելուց հետո տալիս են տարբեր հարցեր՝ ստուգելու համար, թե որքանով են յուրացրել թեման: Հարցադրումների միջոցով կամփոփում թեման:	Աշակերտները ներգրավում են դասին: -բառապաշարի զարգացում -քերականական գիտելիքների զարգացում -քննադատողական մտածելակերպ ձևավորում -բանավոր խոսքի զարգացում -ուշադրության կենտրոնացում -նոր դասի վերլուծություն -պատասխանատվության զգացումի զարգացում Քննադատողական մտածելակերպի զարգացում
Գնահա-տում	· Այս դասը բավականին նպաստավոր կլինի գնահատել շատերին, քանի որ աշակերտները մոտիվացվել և ներգրավվել են: · Այն կլինի ձևավորող և միավորային:		
Տնային աշխա-տանք	Տնային հանձնարարությունն իր մեջ ընդգրկվում է հիմնականում: ● Թեմային վերաբերվող հարցեր և առաջադրանքներ:		

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Մանուկյան Սոնա

Առարկա՝	**Անգլերեն**	**Ամսաթիվ**	**18.05.22**	**Կիսամյակ**	**II**	**Դասարան**	**V^{ա}**
Թեմա՝	**Hairy Henry's Holiday (part 2)**						
Օգտագործվող նյութեր՝	5-րդ դասարանի անգլրեն լեզվի դասագիրք, տետրեր, գրենական պիտույքներ, պռոեկտոր, աշխատանքային թերթիկներ						
Դասի նպատակը՝	● Հարցերին պատասխանելու կարողությունների զարգացում: ● Զարգացնել եղանակավորող բայերի կիրառումը: ● Քերականական գիտելիքների զարգացում: ● Բառապաշարի զարգացում: ● Միմյանց հետ հաղորդակցվելու, խմբով աշխատելու և համագործակցելու կարողությունների զարգացում:						
Վերջնարդյունքները	<u>Աշակերտը կկարողանա՝</u> ● Կազմել հարցեր: ● Պատասխանել հարցերին: ● Եղանակավորող բայով հարցեր տալ և պատասխանել հարցերին: ● Իր իմացածը ինքնուրույն կիրառել հաջորդ դասերի ժամանակ: · Ինքնուրույն որոշակի գաղափարների ձեռքբերում:						

Գործողություններ (ժամ/տևող-ություն)	**Ուսումնական գործունեություն** **Աշակերտներ**	**Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ** **Ուսուցիչ**	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** (հանձնարարության վերջնաարդյունքը նպաստում է դասի նպատակին)
45ր.			

Մուտք, ներկա-բացակա /3ր/	Աշակերտները տեղավորվում են իրենց սեղանների շուրջ՝ նախապես կազմած խմբերով	· Դասարանի ողջունում ·Հաճախումների գրանցում	Աշակերտների ուշադրության կենտրոնացում դասին:
Սկիզբ /5-7ր/	Խմբերը տեղավորվում են իրենց սեղանների շուրջ, լսում և ըմբռնում են օրվա դասի նպատակները և տեղեկանում հաջորդ քայլերի մասին:	Գրատախտակին գրում եմ դասի թեման և նպատակները:	
. Ընթացք /25-30ր/	Աշակերտները ծանոթանում են աշխատանքային թերթիկներին և քարտերին ու պարզաբանում իրենց համար անհասկանալի հարցերը:	Աշակերտներին բաժանում եմ հարցաթերթիկները: Կկազմեմ երկու խումբ: Եվ կներկայացնեմ ու կպարզաբանեմ տվյալ դասի նպատակը՝ գրատախտակին գրելով դասի թեման, ինչպես նաև can, must, may մոդալ բայերը: Աշակերտներին բաժանել եմ 2 խմբի: Ամեն խմբից մեկական աշակերտ կանչելու եմ գրատախտակի մոտ՝ աշխատանքային թերթիկներ ընտրելու համար:	Այս փուլի նպատակն է՝ ուղղորդել աշակերտներին և նրանց օգնել ճիշտ ըմբռնել առաջադրանքը:

	Աշակերտները միմյանց հետ համագործակցելով կկատարեն առաջադրանքը:	Կատարում եմ խթանում: Խթանման 1-ին փուլում կփորձեմ հարցադրումների միջոցով վեր հանել իրենց գիտելիքները: 2-րդ փուլում կհանձնարարեմ բաժանվել ըստ իրենց ունեցած քարտերի՝ օգտագործել եղանակավոր բայերը իրենց ժխտական ձևերով, ինչպես նաև օգտագործել can եղանակավորող բայը անցյալ ժամանակով:	Այս փուլի նպատակն է՝ աշակերտի մոտ զարգացնել թիմային համագործակցային աշխատանք:
	Աշակերտները կդիտեն տեսանյութ արդեն Լոնդոնի տեսարժան վայրերի մասինև կկատարեն գրառումներ:	Առաջարկելու եմ դիտել տեսանյութ Լոնդոնի տեսարժան վայրերի մասին և կատարել նշումներ:	Այս փուլի նպատակն է նախապատրաս տել աշակերտին հաջորդ դասի համար:
Ավարտ /5ր/	Աշակերտները օգտագործելով Five W's: who, when, where, what ans why հարցերը՝ նկարագրելով տեսանյութի հիմնական բովանդակությունը:	Տեսանյութը դիտելուց հետո կտամ հարցեր՝ պարզելու, թե որքանով են յուրացրել թեման: Կհանձնարարեմ ամեն խմբին «Hairy Henry's Holiday» տեքստից կարդալ մի հատված և ներկայացնել այն: Առավել բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է	● Where is The London Eye? ● Is it the highest wheel in the world? ● What can you say about the museum called Madaame Tussaud's? ● What is the name jf a very famous clock in London?

		օգնեն մյուս աշակերտներին: Կամփոփեմ թեման և կտեղեկացնեմ հաջորդ դասի անելիքների մասի:	
Գնահա-տում	· Այս դասը բավականին նպաստավոր կլինի գնահատել շատերին, քանի որ աշակերտները մոտիվացվել և ներգրավվել են: · Այն կլինի ձևավորող և միավորային:		
Տնային աշխատանք	Տնային հանձնարարությունն իր մեջ ընդգրկվում է հիմնականում : ● Թեմային վերաբերվող հարցեր և առաջադրանքներ: · Այն իր մեջ նաև ներառում է հարցեր ,որը կապ է հաստատում նախորդ թեմաների հետ:		